

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

**Բանալի բառեր՝** համաշխարհային գրական ժառանգություն, օտարալեզու հավաքածուներ, հայագիտություն, թարգմանություն, գրացուցակ, էլեկտրոնային շտեմարաններ:

**Keywords:** world literary heritage, collections in foreign languages, armenology, translation, catalog, electronic databases.

Հայաստանի ազգային գրադարանը, որպես ՀՀ-ում գրադարանագիտության, մատենագիտության և գրքագիտության գիտահետազոտական կենտրոն [ՀՀ օրենքը «Գրադարանների և գրադարանային գործի մասին», 2012], ստեղծում է անհրաժեշտ պայմաններ տեղեկության հավաքագրման, մշակման և այն ընթերցողներին բոլոր հնարավոր ուղիներով հասանելի դարձնելու համար: Լինելով համաշխարհային և ազգային մշակութային ժառանգության կենտրոն [նույն տեղում, 2012]՝ առանձնահատուկ կարևորությամբ է համալրվում և պահպանվում հատկապես հայերեն լեզվով հրատարակվող տպագիր և էլեկտրոնային գրականությունը, այդ թվում գրքային, ոչ գրքային հրատարակությունները և պարբերականները, սակայն առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նաև օտարալեզու գրականությանը: Շատ հարուստ է օտար լեզուներով հնատիպ գրքերի ֆոնդը՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, լատիներեն, հունարեն և այլ լեզուներով:

Ազգային գրադարանի ֆոնդերը ձևավորվել են Երևանի արական գիմնազիայի գրադարանի, ինչպես նաև այլ կրթական հաստատությունների, մշակութային ընկերությունների ու այլ կառույցների, ինչպես և անհատական գրադարանների գրականության հիման վրա [Հայաստանի ազգային գրադարան 175, 2008, 79], որտեղ առկա են եղել նաև մեծ քանակությամբ օտարալեզու գրքեր, իսկ հետագայում համալրումները շարունակվել են:

Մեծ խնամքով են իրականացվում ամբողջ աշխարհում լույս տեսնող օտարալեզու, մասնավորապես օտարալեզու հայագիտական հրատարակությունների հավաքագրումը, գրանցումը, մշակումը և ֆոնդերի համալրումը: Ահռելի ջանքեր են գործադրվում ձեռք բերելու աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի տպագիր արտադրանքի նմուշները և այդ առաքելությունը լիարժեք կատարելու նպատակով տարեցտարի կատարելագործվում և ամրապնդվում են երկկողմանի կապերը արտասահմանյան երկրների գրադարանների, համալսարանների, տեղեկատվական կենտրոնների և անհատների հետ [նույն տեղում, 2008, 49]: Ուստի, ավելի քան կարևորվում են Հայաստանում, Սփյուռքում և Արցախում բնակվող հայ հեղինակների կողմից ստեղծված օտարալեզու հայագիտական հրատարակությունները:

ՀԱԳ-ն ունի հարուստ օտարալեզու հավաքածու (գիրք, հանդես, թերթ, ազդագիր, ձայնապնակ, էլեկտրոնային կրիչներ, ատենախոսություններ, սեղմագրեր, բացիկներ, քարտեզներ, ատլասներ և այլն), որոնք միտված են բավարարելու գրադարանի ընթերցողների լայն շրջանակների պահանջմունքները: 2022 թ. տվյալներով, ՀԱԳ-ում պահպանվում է ավելի քան 100 լեզվով գրականություն, այդ թվում՝ ադիգիերեն, ասորերեն, ավարերեն, ավեստերեն, արամեերեն, ինչպես նաև աքքադերեն, բաշկիրերեն, դարի, էսպերանտո, էսկիմոսերեն, թագալերեն (թագալի), թայերեն, տելուգու, լաոսերեն, կարաիմերեն, կարակալպակերեն, հաուսերեն, պահլավերեն, սանսկրիտ, սուահիլի, ուրդու, չադաթայերեն, մալայերեն, մարաթի և այլն:

Ռուսերենը մեծամասնություն է կազմում ՀԱԳ հավաքածուներում: Մեծամասնություն կազմող այլ օտար լեզուներից են անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, վրացերեն, ադրբեջաներեն և պարսկերեն հավաքածուները:

Տարեկան գրադարանի ֆոնդեր են մտնում ավելի քան 10.000 միավոր օտարալեզու տպագիր արտադրանք և էլեկտրոնային կրիչներ [Հաշվետվություն 2019 թ.-ին կատարած աշխատանքների, 2020, 42]. շուրջ 60%՝ ռուսերեն լեզվով, իսկ 40%՝ այլ օտար լեզուներով:

Լայնորեն ներկայացված են լեզվաբանության վերաբերյալ արտասահմանյան հրատարակություններ, այդ թվում՝ լեզուների դասավանդման մեթոդների, ինչպես նաև պատմական, փիլիսոփայության, սոցիոլոգիայի, գեղագիտության, իրավունքի, կրոնի, կրթության, գրադարանագիտության և այլ ոլորտների գրականության հավաքածուներ:

Գրադարանն ունի եզակի արտասահմանյան գրականություն, այդ թվում հազվագյուտ գրքեր, պարբերականներ, քարտեզներ: Օտարալեզու ֆոնդերում առանձնահատուկ տեղ է գրավում, օրինակ, «Ասիայի աղյուսակը քարտեզը (Tabula Asiae III)»: Այն տպագրվել է Վենետիկում, 1561-1564 թվականներին: Գունավորված է ձեռքով: Հեղինակն է Ժիրոլամո Ռուշելլին (Girolamo Ruscelli): Քարտեզը լատիներեն է: Ներկայացված է Սև և Կասպից ծովերի միջև ընկած տարածաշրջանի հնագույն պատկերը, որը տարածվում է դեպի հարավ՝ ներառելով ամբողջ Մեծ Հայքը և Փոքր Հայքի մի մասը՝ հիմնված Կլավդիոս Պտղոմեոսի աշխարհագրության վրա՝ մ.թ.ա. երկրորդ դարից:

Սկսած հնագույն ժամանակներից՝ Հայաստանը պատկերվել է հազարավոր վիմագիր, ձեռագիր և տպագիր քարտեզներում: Տարբեր լեզուներով հանդիպող «Հայաստան» անունը ամենաշատ տարածված աշխարհագրական անվանումներից է:

Մեկ այլ արժեքավոր հրատարակություն է «Adams' Illustrated Panorama of History» աղյուսակը, որը համընդհանուր պատմության ժամանակագրական պատկերազարդ աղյուսակ է: Այն գծել է Սեբաստիան Ադամսը: Հրատարակվել է 1878թ-ին: «Ադամսի պատմության պատկերազարդ համայնապատկերն» ունի 68.5 սմ բարձրություն և 660.4 սմ երկարություն: Այս հսկա աղյուսակում հեղինակը նախ ներկայացրել է աշխարհի պատմությունը աստվածաշնչյան տեսանկյունից՝ սկսած Ադամի արարումից մինչև 1878 թ., ապա անցում է կատարել պատմական ժամանակաշրջանին: Աղյուսակում, որտեղ պատկերված է նաև Հայաստանը (Armenia), նա նշել է բոլոր կարևոր իրադարձությունները և անհրաժեշտության դեպքում տվել պատմական և աստվածաշնչյան մեկնաբանություն: Գծապատկերի վերջում Ադամսը ցույց է տվել իշխող համաշխարհային կառավարիչներին: Հին, նորագույն և աստվածաշնչյան պատմության ժամանակագրական այս զարմանալի գծապատկերը հրապարակվել է Եվրոպայի նշանավոր հրատարակիչ Ա. Հ. Ուոքերի կողմից՝ Լոնդոնում և Փարիզում: Սա 3-րդ հրատարակությունն է. 1-ին հրատարակությունը տպագրվել է 1871 թվականին:

Գրադարանում կան շատ այլ արժեքավոր հրատարակություններ՝ օտար լեզուներով: Առանձնահատուկ կարևոր է հատկապես այն, որ դեռևս հնագույն ժամանակներից տարբեր ազգերի գրականությունը թարգմանվել է՝ հասանելի դառնալով այլազգի ընթերցողներին ևս:

Հայ գրականությունը այլ լեզուներով սկսել է թարգմանվել շատ վաղուց. հնագույն թարգմանությունները վերաբերում են 5-րդ դարին: Դրանք մեծ արժեք են ներկայացնում և հասանելի են դառնում օտարազգի ընթերցողներին և առհասարակ հայ գրականությամբ հետաքրքրվող բոլոր օտարազգիներին, ովքեր կարող են կարդալ միայն իրենց մայրենի լեզվով կամ եվրոպական այլևայլ լեզուներով:

Անշուշտ, կատարված բոլոր թարգմանությունները նույն մակարդակի չեն, և միևնույն հարազատությամբ չեն արտահայտում բնագիրը, սակայն բոլոր թարգմանիչները միևնույն բարի և վսեմ նպատակով են առաջնորդվել. այն է՝ փոքր հայ ժողովրդի գրական մեծ ու պայծառ արվեստը մատուցել այլ ազգերի և ընթերցման ավելի լայն ասպարեզ հանել: Հայ գրականության բոլոր թարգմանիչների անուններն էլ այսօր թանկ են ու սիրելի հայերի համար [The Armenian literature in foreign languages, 1971, 14]: Միայն հայ բանաստեղծ, արձակագիր, գրական, ազգային և հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններից ՀԱԳ-ում առկա են թարգմանություններ՝ ռուսերեն, անգլերեն, վրացերեն, իտալերեն, պարսկերեն, քրդերեն, ռումիներեն, չեխերեն, հունգարերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ուկրաիներեն, արաբերեն, ադրբեջաներեն, բե-

լառուսերեն, բուլղարերեն, հունարեն, թուրքերեն, իսպաներեն, ճապոներեն, դրոզերեն, սերբերեն, տելուգու, կորեերեն, հոլանդերեն, հնդկերեն, լատվիերեն և լիտվերեն լեզուներով:

Հայ ժողովրդի ազգային էպոսը՝ «Սասունցի Դավիթը», թարգմանվել է բազմաթիվ օտար լեզուներով՝ աշխարհի տարբեր վայրերում (ՀԱԳ-ում առկա են 14 լեզվով թարգմանություններ): Կան նաև բացառիկ օտարալեզու գրքեր, որ պատմում են հայկական ձեռագրերի, հայ գրքի և առհասարակ հայկական գրատպության մասին՝ անգլերեն, գերմաներեն, դանիերեն, ռումիներեն, ֆրանսերեն, ռուսերեն, իտալերեն, լեհերեն, հունարեն և այլ լեզուներով:

Օտար ազգերին է ներկայացվել նաև հայկական խոհանոցը՝ անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն, հունգարերեն, իտալերեն, պորտուգալերեն, ռումիներեն, գերմաներեն և ռուսերեն լեզուներով: Ներկայացվել են նաև գրքեր հայկական դուդուկի մասին՝ անգլերեն լեզվով, խաչքարի մասին՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով, լավաշի մասին՝ անգլերեն լեզվով, ինչպես նաև բազմաթիվ են հայոց պատմության մասին թարգմանությունները կամ օտար լեզուներով հրատարակությունները, որոնք հասանելի են նաև այլազգի ընթերցողներին և արժեքավոր են ուսումնասիրման տեսանկյունից:

Վերջին տարիներին ՀԱԳ-ում մեծ աշխատանքներ են տարվում հայերեն և օտարալեզու ֆոնդերը հանրահռչակելու, նոր հավաքածուներ ստեղծելու, այսինքն՝ համացանցային ոլորտի զարգացմանը խթան հանդիսացող միջոցներ ստեղծելու ուղղությամբ: Իրականացվող աշխատանքների շնորհիվ ողջ գրադարանային ֆոնդն արտացոլվում է թե՛ գրացուցակներում և քարտարաններում և թե՛ էլեկտրոնային շտեմարաններում:

Հատկանշական է նաև այն, որ ՀԱԳ օտարալեզու գրականությունը հասանելի է նաև բաց դարակներում, որտեղ ներկայացված են արտասահմանյան գրականությունը, բառարանները, դասագրքերը և այլ առաջնահերթ պահանջարկ ունեցող գրքեր՝ նախատեսված ընթերցողների լայն շրջանակների համար:

ՀԱԳ ընթերցասարահներում առկա են մեծածավալ օտարալեզու տեղեկատու գրքեր՝ հանրագիտարաններ, բառարաններ, գիտական կամ գիտահանրամատչելի *տեղեկատու փաստաթղթեր*՝ բաց ու հասանելի ընթերցողի համար: Կան նաև արտասահմանյան գրականության անկյուններ և դարակներ՝ Ամերիկյան, Ղազախական, Չինական, Ուրուգվայական, Ավստրո-գերմանական, Ռուսական, Եվրոպական և այլն:

Գրադարանում պահպանվող փաստաթղթերի մասին տեղեկատվության հասանելիության հարթակների ստեղծումը մեր գործունեության հիմնական ուղղություններից է: Մշտապես փնտրում ենք նոր լուծումներ, որոնք թույլ կտան ավելի լավ բացահայտել ֆոնդը, այն ավելի մատչելի դարձնել ընթերցողների համար և ապահովել առավել հուսալի անվտանգություն: Առանձնահատուկ նշանակություն ունեն հավաքածուների նկարագրությունը, պահպանումը, թվայնացումը և հասանելիությունը համացանցում:

ՀԱԳ-ում այսօր մեծածավալ աշխատանքներ են իրականացվում «Հայաստանյան գրադարանների համահավաք գրացուցակ», «Հայ մամուլ», «Հայ գիրք» և այլ շտեմարաններում՝ լիարժեք և բազմաբովանդակ տեղեկատվության համալրման և պահպանման ուղղությամբ: «Համաշխարհային գրականությունը Հայաստանի ազգային գրադարանում» շտեմարանն ընդգրկում է տարբեր երկրների փաստաթղթային հավաքածուներ՝ տարբեր լեզուներով, այդ թվում նաև՝ հայերեն լեզվով: Այդ հավաքածուներից են՝ Իրանական, Լեհական, Լիտվական, Շվեյցարական, Ճապոնական, Չինական, Ուկրաինական, Ղազախական, Ռուսական և այլ հավաքածուներ: Տարաբնույթ գրականությունն արտացոլում է այդ երկրի որոշակի դարաշրջանի մշակույթը, պատմությունը, ժամանակի հոգևոր կյանքը, արվեստը, այդ թվում՝ երաժշտությունը, կինոն և թատրոնը, ինչպես նաև գրականությունը, քաղաքականությունը, գիտությունը, լեզուն, կրթությունը, բժշկությունը և այլն: Իրանական հավաքածուն, օրինակ, ընդգրկում է ամփոփ տեղեկատվություն Իրանի պատմության, մշակույթի, լեզվի, կրոնի և այլ ոլորտների մասին: Համաշխարհային գրականության հավաքածուում ընդգրկված յուրաքանչյուր փաստաթուղթ ամփոփ տեղեկատվություն է տվյալ երկրի մասին. այսինքն՝ ունի երկրագիտական նշանակություն:

Համաշխարհային գրականության հավաքածուներից զատ ստեղծվել է նաև «Արմենիկա» հայագիտական հավաքածուն՝ նույն սկզբունքով: 01.10.2022 թ.-ի դրությամբ՝ «Արմենիկա» հավաքածուն ընդգրկում է 7477 հրատարակություն ռուսերեն և 7045 այլ օտար լեզուներով հրատարակություններ:

Ըստ 2022 թվականի Google Analytics վիճակագրության՝ գրադարանի կայքէջ առավելագույնս այցելել են հետևյալ երկրներից՝ ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Չինաստանից, Ֆրանսիայից, Ադրբեջանից, Գերմանիայից:

Այցելուներն առավել շատ օգտվել են ՀԱԳ շտեմարաններից, ծանոթացել են ՀԱԳ գրանցման կարգի հետ, օգտվել են ՀԱԳ հրատարակություններից:

Կարելի է փաստել, որ համակարգչային աշխատանքներն իրականացվում են ոչ միայն ներկա, այլ նաև հետագա սերունդների համար և զարգացման միտում ունեն:

Գրադարանում իրականացված աշխատանքների շնորհիվ օտարալեզու ֆոնդերն առավել հասանելի են հասարակությանը և հնարավորություն են ընձեռում ստանալ օպերատիվ և դինամիկ տեղեկատվություն՝ արագ, մատչելի և առանց ավելորդ ջանքերի:

## SUMMARY

The article includes information about the library's digital collections and foreign literature in the UniArmenian catalogue. The information about collections on Armenian studies in foreign languages, supported and non-supported languages, and types of foreign language print materials available at the National Library of Armenia is presented. The article also discusses the value of foreign language literature and how in demand it is in Armenia, as well as the role and importance of foreign language Armenian press and what efforts are being done in that direction. A summary is provided on how much the National Library of Armenia has contributed to the replenishment of foreign language collections according to statistics of the last ten years, when the greatest number of foreign language literature was acquired, as well as what unique books are kept in the collection. The role and importance of press on Armenian studies in foreign languages and what efforts are being done in that direction also discussed.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի ազգային գրադարան 175, Երևան, Լուսակն, 2008, 90 էջ:
2. ՀՀ օրենքը «Գրադարանների և գրադարանային գործի մասին» // Ընդունված է 2012 թ.-ի մարտի 21-ին, [Էլեկտրոնային հրատարակություն]
3. URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75198>, 29.11.2022
4. ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Հաշվետվություն 2019 թ.-ին կատարած աշխատանքների, Երևան, 2020, 124 էջ:
5. The Armenian literature in foreign languages, Yerevan, 1971, 375 p.